

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
/ՀԻՄՆԱԴՐԱՄ/**

**ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՀՍԿՄԱՆ ԵՎ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՌԵՅԹԻՆԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ - ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

**ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

**ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

Հաստատված են ՀԱՊՀ Գիտական խորհրդի
2015թ. օգոստոսի 28-ի նիստի թիվ 01 որոշմամբ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՀՄԿՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՍՏՄԱՆ ՌԵՑԹԻՆԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ-ԸԼԹԱՑԱԿԱՐԳ.....	3
1. ՌԵՑԹԻՆԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅՆԵՐԸ.....	4
2. ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ	5
3. ՌԵՑԹԻՆԳԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԸ	7
4. ՉԱՓՈՐՈՇԻՉ ՌԵՑԹԻՆԳԱՅԻՆ ՄԻԱԿՈՐՆԵՐԻ ՁԵՎԱԿՈՐՈՒՄՆ ԸՍՏ ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ	10
5. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԸԼԹԱՑԻԿ ԱՏԵՍՏԱԿՈՐՄԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՐԱՐ ԳՆԱՀԱՍՏՄԱՆ ԸԼԹԱՑԱԿԱՐԳԸ	17
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՍՏՄԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԸԼԹԱՑԱԿԱՐԳ	26
ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱԿՈՐՄԱՆ ԸԼԹԱՑԱԿԱՐԳ	31
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	32
2. ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՂԵԿԱԿԱՐՈՒՄԸ ԵՎ ԱՏԵՍՏԱԿՈՐՈՒՄԸ.....	32
3. ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ.....	36
4. ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ	40
5. ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՅՈՒՄԸ.....	42

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՀՄԿՄԱՆ ԵՎ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՌԵՑԹԻՆԳԱՅԻՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ -

Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ

1. ՌԵՅԹԻՆԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՑԹՆԵՐԸ

- 1.1. Ուսանողների գիտելիքների հսկման և գնահատման ռեյթինգային համակարգի նպատակն է՝
- ապահովել ուսանողի ուսումնական գործընթացի համաչափությունը,
 - նպաստել ուսումնառության մոտիվացմանը, ուսումնական գործընթացում ներմուծել մրցակցության տարրեր,
 - ստանալ անաչառ և ճշգրիտ տեղեկություն ուսանողի գիտելիքների և մասնագիտական պատրաստականության վերաբերյալ,
 - բարձրացնել ուսանողի և դասախոսի աշխատանքի արդյունավետությունը:
- 1.2. Ռեյթինգային համակարգի կիրառումը հնարավորություն է ընձեռում՝
- ուսանողի գիտելիքները գնահատելիս հաշվի առնել նրա կողմից ինչպես ուսումնական գործընթացի բոլոր բաղադրիչների յուրացման, այնպես էլ ինքնուրույն աշխատանքի արդյունավետությունը,
 - հեշտացնել մատուցվող նյութի յուրացումն ըստ բաժինների և բաղադրիչների, կազմակերպել ուսումնառության արդյունավետ գործընթաց,
 - նպաստել ուսումնառության ընթացքում ուսանողի ինքնուրույն աշխատանքի չափաբաժնի ընդլայնմանը և բարելավմանը,
 - անհատականացնել ուսումնառության գործընթացը և ստեղծել ուսումնական ճկուն պլանների կիրարկման նախադրյալներ,
 - ապահովել կրթական մեկ աստիճանից մյուսին անցման հիմնավորված ընթացակարգ, պարզեցնել անցման գործընթացը,

- ստեղծել ուսանողների ուսումնառությունը խրախուսող գործուն համակարգ (անվանական կրթաթոշակների նշանակում, գործուղումներ և ստաժավորումներ, ուսուցում մագիստրա-տուրայում, մրցանակների և դիպլոմների շնորհում, աշխատատեղավորում և այլն),
- ստեղծել տվյալների բազա՝ կրթական յուրաքանչյուր ծրագրի վերջնարդյունքների գնահատման համար:

3. ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Ուսանողի գիտելիքներն ու մասնագիտական պատրաստականության մակարդակը գնահատվում է ռեյթինգային միավորներով (գնահատականներով) և կրեդիտներով, որոնցով հաշվվում են նրա վարկանիշային միավորները և որակավորման միջին գնահատականը:

- 3.1. ***Չափորոշիչ ռեյթինգ.*** տվյալ առարկայի կամ դրա որևէ բաղադրիչի համար սահմանված առավելագույն միավորը:
- 3.2. ***Փաստացի ռեյթինգ.*** այն իրական միավորը, որը ստացել է ուսանողը տվյալ առարկայից կամ ուսումնական գործընթացի որևէ բաղադրիչից:
- 3.3. ***Անցողիկ ռեյթինգ.*** նվազագույն միավորը, որն անհրաժեշտ է տվյալ առարկայից կամ ուսումնական գործընթացի որևէ բաղադրիչից դրական գնահատվելու համար:
- 3.4. ***Կիսամյակային առարկայական ռեյթինգ.*** տվյալ առարկայի բաղադրիչներից կիսամյակի ընթացքում ուսանողի ստացած միավորների գումարը:
- 3.5. ***Կիսամյակային, ուսումնական տարվա, ուսումնառության ամբողջ ժամանակահատվածի արդյունարար ռեյթինգ.*** Կիսամյակում, ուսումնական տարում, ուսումնառության ամբողջ ժամանակահատվածում ուսանողի ստացած ռեյթինգային միավորների միջին թվաբանականը:

- 3.6. ***Ծրագրային կրեդիտներ.*** բոլոր այն դասընթացների և ուսումնական մոդուլների գումարային կրեդիտը, որոնք պարտադիր են կրթական տվյալ ծրագրի պահանջների կատարման համար:
- 3.7. ***Որակավորման կրեդիտներ.*** բոլոր առարկաներից (բացառությամբ ստուգարքայինների), կուրսային աշխատանքներից ու նախագծերից, պրակտիկաներից (բացառությամբ ուսումնական), հետազոտական աշխատանքներից և ամփոփիչ ատեստավորումից ուսանողի վաստակած կրեդիտների գումարը:
- 3.8. ***Վարկանիշային միավոր.*** բոլոր առարկաներից (բացառությամբ ստուգարքայինների), կուրսային աշխատանքներից ու նախագծերից, պրակտիկաներից (բացառությամբ ուսումնական), հետազոտական աշխատանքներից և ամփոփիչ ատեստավորումից ուսանողի ստացած փաստացի ռեյթինգային միավորների (գնահատականների) և տվյալ դասընթացի ատեստավորման համար սահմանված կրեդիտի արտադրյալը:
- 3.9. ***Արդյունարար վարկանիշային միավոր.*** որակավորման կրեդիտների հաշվարկում ներառվող բոլոր դասընթացներից ուսանողի ստացած վարկանիշային միավորների գումարը:
- 3.10. ***Միջին որակական գնահատական.*** արդյունարար վարկանիշային միավորների և որակավորման կրեդիտների հարաբերությունը:
- 3.11. ***Կիսամյակային, ուսումնական տարվա, ուսումնառության ամբողջ ժամանակահատվածի միջին որակական գնահատական.*** կիսամյակում, ուսումնական տարում, ուսումնառության ամբողջ ժամանակահատվածում ուսանողի ստացած արդյունարար միջին որակական գնահատականը:

3. ՌԵՅԹԻՆԳԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԸ

- 3.1. Մասնագիտության կրթական ծրագրում ընդգրկված դասընթացներն ըստ գնահատման ձևի լինում են քննական և ստուգարքային:
- 3.2. Կիսամյակի ընթացքում քննական առարկայից, կուրսային նախագծից, կուրսային աշխատանքից, պրակտիկաներից (բացառությամբ ուսումնական), հետազոտական աշխատանքներից, դիպլոմային աշխատանքի/մագիստրոսական թեզի պաշտպանությունից ուսանողի հավաքած միավորների առավելագույն գումարը (չափորոշիչ ռեյթինգը) կազմում է 100 միավոր:
- 3.3. Առարկայի չափորոշիչ ռեյթինգը ներառում է հետևյալ բաղադրիչները.
 - դասընթացին ուսանողի մասնակցության գնահատում՝ դասահաճախումների հաշվառման միջոցով (առկա ուսուցում),
 - գիտելիքների յուրացման միջանկյալ (առկա ուսուցում) և ընթացիկ (հեռակա ուսուցում) ստուգումներ (այսուհետ՝ միջանկյալ/ընթացիկ ստուգումներ)՝ դասընթացի վերջնարդյունքների ձեռքբերումների գնահատման չափանիշների միջոցով (լաբորատոր, գործնական, ստուգողական և հաշվեգրաֆիկական աշխատանքների, արտալսարանային առաջադրանքների, ռեֆերատների, սեմինարների, մոդուլների կատարման և յուրացման ստուգում ու գնահատում),
 - գիտելիքների յուրացման ստուգում՝ ամփոփիչ քննության, կուրսային նախագծի, կուրսային աշխատանքի, պրակտիկաների (բացառությամբ ուսումնական) հաշվետվության, հետազոտական աշխատանքների, դիպլոմային աշխատանքի/ մագիստրոսական թեզի պաշտպանության չափանիշներին համապատասխան գնահատման միջոցով:

- 3.4. Առարկայի փաստացի ռեյթինգը որոշվում է 3.3 կետում թվարկված բաղադրիչներից ուսանողի ստացած փաստացի ռեյթինգային միավորների գումարով:
- 3.5. Ռեյթինգային միավորների համապատասխանեցումը գնահատման տարբեր սանդղակների կատարվում է համաձայն աղ. 3.1-ի: 20 և 10 միավորանոց համակարգերից 100 միավորանոցի անցումը կատարվում է ռեյտինգային համապատասխան միջակայիքի միջին (կլորացված հոգուտ ուսանողի) միավորով:

Աղյուսակ 3.1

**Ռեյթինգային միավորների համապատասխանեցումը
գնահատման տարբեր սանդղակների**

Գնահատականը	Ռեյթինգը՝ 100 միավորանոց համակարգով	Միավորը՝ 20 Միավորանոց համակարգով	Միավորը՝ 10 միավորանոց համակարգով	Թվանիշը՝ կրեդիտային համակարգով	Տառային նշանակումը՝ կրեդիտային համակարգով
Գերազանց	95-100	20	10	4,0	A*
	87-94	19	9	4,0	A
	81-86	18	9	3,7	A-
Լավ	75-80	17	8	3,3	B*
	71-74	16	8	3,0	B
	67-70	15	7	3,0	B
	61-66	14	7	2,7	B-
Բավարար	58-60	13	6	2,3	C*
	55-57	12	6	2,3	C*
	51-54	11	5	2,0	C
	46-50	10	5	2,0	C
	43-45	9	4	1,7	C-
40-42	8	4	1,7	C-	
Անբավարար	<40	<8	<3	1,0	D
Չներկայացած	-	-	-	0	F
Ստուգված	-	-	-	-	S
Չստուգված	-	-	-	-	U

3.6. Ուսանողի կիսամյակային, ուսումնական տարվա, ուսումնառության ամբողջ ժամանակահատվածի արդյունարար ռեյթինգը որոշվում է հետևյալ արտահայտությամբ՝

$$S = (S_1 + S_2 + \dots + S_m) / m ,$$

որտեղ $S_1...S_m$ -ը տվյալ ժամանակահատվածի (կիսամյակ, ուսումնական տարի, ամբողջ ուսումնառություն) i -րդ առարկայի փաստացի ռեյթինգն է, m -ը՝ տվյալ ժամանակահատվածում առարկաների ընդհանուր թիվը:

3.7. Կիսամյակային, ուսումնական տարվա, ուսումնառության ամբողջ ժամանակահատվածի արդյունարար ռեյթինգները միջինացված ինտեգրալ մեծություններ են՝ 40-100 միավորի սահմաններում՝ ըստ ուսանողների առաջադիմության ցուցանիշների: Արդյունարար ռեյթինգով և միջին որակական գնահատականով կատարվում է ուսանողների տարակարգումն ըստ առաջադիմության:

3.8. Արդյունարար վարկանիշային միավորը (Ψ) որոշվում է հետևյալ արտահայտությամբ՝

$$\Psi = \sum_{i=1}^k \Psi_{i} \times \Phi_i ,$$

որտեղ i -ն և k -ն բոլոր առարկաների (բացառությամբ ստուգաբայինների), կուրսային նախագծերի, կուրսային աշխատանքների, պրակտիկաների (բացառությամբ ուսումնական), հետազոտական աշխատանքների և ամփոփիչ ատեստավորման համապատասխանաբար համարը և քանակն են, իսկ Ψ_{i} -ն և Φ_i -ն՝ i -րդ դասընթացի կրեդիտը և նույն դասընթացից ուսանողի ստացած կիսամյակային ռեյթինգային միավորը (գնահատականը):

3.9. Որակավորման կրեդիտը (ՈԿ) որոշվում է հետևյալ արտահայտությամբ՝

$$\text{ՈԿ} = \sum_{i=1}^k \text{Կրեդիտ}_i :$$

3.10. Միջին որակական գնահատականը (ՄՈԳ) որոշվում է հետևյալ արտահայտությամբ՝

$$\text{ՄՈԳ} = \text{ՎՄ} / \text{ՈԿ}:$$

4. ՉԱՓՈՐՈՇԻՉ ՌԵՅԹԻՆԳԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ԸՍՏ ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ

4.1. Առարկաների (բացառությամբ ստուգաբայինների), կուրսային նախագծերի, կուրսային աշխատանքների, պրակտիկաների (բացառությամբ ուսումնական), հետազոտական աշխատանքների և դիպլոմային աշխատանքի/մագիստրոսական թեզի պաշտպանության չափորոշիչ ռեյթինգային միավորների բաշխումն ըստ գնահատման բաղադրիչների իրականացվում է ուսումնամեթոդական վարչության (ՌԻՄՎ) կողմից՝ հաշվի առնելով առարկան վարող ամբիոնի առաջարկությունները:

4.2. Երաշխավորվում են չափորոշիչ ռեյթինգների հետևյալ հարաբերակցությունները.

- տեսական դասընթացների համար՝ համաձայն աղ. 4.1-ի,

Տեսական դասընթացների բաղադրիչների չափորոշիչ ռեյթինգները

N	Առարկայի ստուգողական բաղադրիչները	Միավոր
1	Կանոնավոր դասահաճախումներ (առկա ուսուցում)	10
2	Առաջին միջանկյալ ստուգում՝ դասընթացի վերջնարդյունքների ձեռքբերումների գնահատման միջոցով (առկա ուսուցում)	20
3	Երկրորդ միջանկյալ ստուգում՝ դասընթացի վերջնարդյունքների ձեռքբերումների գնահատման չափանիշների միջոցով (առկա ուսուցում)	20
4	Ընթացիկ ստուգում (լաբորատոր, գործնական, ստուգողական և հաշվեգրաֆիկական աշխատանքների, արտալսարանային առաջադրանքների, ռեֆերատների, սեմինարների, մոդուլների կատարման և յուրացման ստուգում և գնահատում) (հետակա ուսուցում)	40
5	Անփոփիչ քննություն (առկա ուսուցում)	50
6	Անփոփիչ քննություն (հետակա ուսուցում)	60

- ղիպլումային աշխատանքի/մագիստրոսական թեզի, կուրսային նախագծի և կուրսային աշխատանքի, հետազոտական աշխատանքի համար՝ համաձայն աղ. 4.2-ի,

Դիպլումային աշխատանքի/մագիստրոսական թեզի, կուրսային նախագծի և կուրսային և հետազոտական աշխատանքի բաղադրիչների չափորոշիչ ռեյթինգները

N	Դիպլումային աշխատանքի/մագիստրոսական թեզի, կուրսային նախագծի և կուրսային աշխատանքի ստուգողական բաղադրիչները	Միավոր
1	Հաշվարկային և գրաֆիկական բաժինների կատարման որակ	10
2	Աշխատանքի կատարման համաչափություն	30
3	Պաշտպանության գնահատում	60

- պրակտիկաների (բացառությամբ ուսումնական) համար՝ համաձայն աղ. 4.3-ի:

Աղյուսակ 4.3

**Պրակտիկաների (բացառությամբ ուսումնական) բաղադրիչների չափորոշիչ
 ռեյթինգները**

N	Պրակտիկայի ստուգողական բաղադրիչները	Միավոր
1	Պրակտիկային կանոնավոր հաճախում	20
2	Գործնական առաջադրանքի կատարում	30
3	Հաշվետվության ձևակերպում և նշված ժամկետում հանձնում	50

Ուսումնական պրակտիկան ամփոփվում է հաճախումների հիման վրա (ոչ ավել քան 1 բացակա օր) <<ստուգված/չըստուգված>> համակարգով:

4.3. Դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության (դասահաճախումների) ռեյթինգը ձևավորվում է համաձայն աղ. 4.4-ի:

Աղյուսակ 4.4

Մասնակցության աստիճանը, %	Հատկացվող ռեյթինգային միավորը
96 - 100	10
91 - 95	9
86 - 90	8
81 - 85	7
76 - 80	6
71 - 75	5
66 - 70	4
61 - 65	3
56 - 60	2
50 - 55	1
< 50	0

Լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանը որոշվում է հետևյալ արտահայտությամբ՝

$$[(B+C) / A] \times 100\%,$$

որտեղ **A**-ն տվյալ առարկայի բոլոր բաղադրիչներին հատկացված կիսամյակային ժամերի թիվն է, **B**-ն՝ տվյալ առարկայի բոլոր բաղադրիչներին ուսանողի մասնակցած ժամերի թիվը, **C**-ն՝ տվյալ առարկայի բոլոր բաղադրիչներից ուսանողի հարգելի բացակայած ժամերի թիվը: Դասահաճախումների ռեյթինգը ձևավորում է առարկան դասավանդող դասախոսը, վերցնելով **A** և **C** մեծությունները դեկանատից, իսկ **B** մեծությունը՝ դասամատյանից: Սմեն ամսվա վերջում դեկանատի կողմից դասամատյանում նշվում են տվյալ առարկայի բոլոր բաղադրիչներից յուրաքանչյուր ուսանողի հարգելի բացակայությունների ժամաքանակը:

- 4.4. Միջանկյալ/ընթացիկ ստուգումների ռեյթինգը ձևավորվում է ըստ դասընթացի ծրագրով նախատեսված աշխատանքների կատարողականի և հանձնումների՝ համաձայն դասընթացը վարող ամբիոնի կողմից մշակված և ՈԻՄՎ-ի (մասնաճյուղերում՝ համապատասխան բաժնի) հետ համաձայնեցված վերջնարդյունքների գնահատման չափանիշների (լաբորատոր, գործնական, ստուգողական և հաշվեգրաֆիկական աշխատանքների, արտասարանային առաջադրանքների, ռեֆերատների, սեմինարների, մոդուլների կատարման և յուրացման ստուգում և գնահատում):

- 4.5. Քննական առարկաներից գիտելիքների գնահատումը կատարվում է միջանկյալ / ընթացիկ ստուգումների և/կամ ամփոփիչ քննությունների միջոցով:
- 4.6. Քննական առարկայի կիսամյակային անցողիկ ռեյթինգը կազմում է համապատասխան չափորոշիչ ռեյթինգի 0,4 մասը: Միջանկյալ (առկա ուսուցում) և ընթացիկ (հեռակա ուսուցում) ստուգումների և ամփոփիչ քննության համար անցողիկ ռեյթինգներ չեն սահմանվում:
- 4.7. Քննական առարկայի գնահատման սխեմաները տրված են աղ. 4.5-ում (առկա ուսուցում) և աղ. 4.6-ում (հեռակա ուսուցում), որտեղ երկրորդ տողում դեկանատի կողմից նշվում են համապատասխան չափորոշիչ և անցողիկ ռեյթինգային միավորները:

Աղյուսակ 4.5

Առկա ուսուցման քննական առարկայի ամփոփագրի ձևաթերթ

Դասահա- ճախման ռեյթինգ	1-ին միջանկյալ ստուգման ռեյթինգ	2-րդ միջանկյալ ստուգման ռեյթինգ	Ամփոփիչ քննության ռեյթինգ	Կիսամյակային առարկայական ռեյթինգ (Գն)	Գնահա- տական
10	20	20	50	100 (≥ 40)	

Աղյուսակ 4.6

Հեռակա ուսուցման քննական առարկայի ամփոփագրի ձևաթերթ

Ընթացիկ ստուգման ռեյթինգ	Ամփոփիչ քննության ռեյթինգ	Կիսամյակային առարկայական ռեյթինգ (Գն)	Գնահատական
40	60	100 (≥ 40)	

- 4.8. Պրակտիկայի (բացառությամբ ուսումնական) անցողիկ ռեյթինգը կազմում է դրա չափորոշիչ ռեյթինգի 0,4 մասը, իսկ կանոնավոր հաճախման չափորոշիչ ռեյթինգի ստուգողական բաղադրիչը՝ վերջինիս ռեյթինգի 0,5 մասը: Պրակտիկայի (բացառությամբ ուսումնական) հաշվետվության կազմումը և հանձնումը պարտադիր է: Ուսումնական պրակտիկայի հաշվետվությունը ներկայացում է ուսումնական պրակտիկայի ղեկավարը: Անհարգելի պատճառով պրակտիկային չմասնակցած ուսանողն անվերապահորեն հեռացվում է համալսարանից:
- 4.9. Կուրսային նախագծի, կուրսային և հետազոտական աշխատանքների, դիպլոմային աշխատանքի/մագիստրոսական թեզի ստուգողական բաղադրիչների համար (աղ. 4.2) անցողիկ ռեյթինգներ չեն սահմանվում: Կուրսային նախագծի, կուրսային և հետազոտական աշխատանքների, դիպլոմային աշխատանքի/մագիստրոսական թեզի անցողիկ ռեյթինգները կազմում են համապատասխան չափորոշիչ ռեյթինգների 0,4 մասը: <<Աշխատանքի կատարման համաչափություն>> բաղադրիչի ռեյթինգը ձևավորվում է համապատասխան ամբիոնի վարիչի որոշմամբ ստեղծված հանձնաժողովի կողմից՝ համաձայն աղ. 4.7-ի, կատարման համար հատկացված ժամանակահատվածում իրականացված կատարողականի՝ երեք անգամ կատարած ստուգումների արդյունքների հիման վրա:

Կուրսային նախագծի, կուրսային և հետազոտական աշխատանքների, դիպլոմային աշխատանքի/մագիստրոսական թեզի կատարման համաչափության կատարողականի գնահատման ձևաթերթ

Տոկոսավորում	10	20	30	40	50	60	70	80	90	100
	%	%	%	%	%	%	%	%	%	%
	ՄԻԱՎՈՐՆԵՐ									
I	3	5	8	10	10	10	10	10	10	10
II	1	2	3	4	6	8	10	10	10	10
III	1	2	3	4	5	6	7	8	9	10

- 4.10. Ստուգարքային առարկայից գիտելիքները գնահատվում են <<ստուգված/չստուգված>> համակարգով, ընթացիկ (լաբորատոր, գործնական, ստուգողական և հաշվեգրաֆիկական աշխատանքների, արտալսարանային առաջադրանքների, ռեֆերատների, սեմինարների, մոդուլների կատարման և յուրացման ստուգում և գնահատում) և ամփոփիչ ստուգումների միջոցով:
- 4.11. Ստուգարքային առարկայի գնահատման սխեմաները և ամփոփագրերի լրացման օրինակները առկա ուսուցման համար բերված են աղ.4.8-ում (հեռակա ուսուցման դեպքում դասահաճախում սյունյակը չի դիտարկվում):

Ստուգարքային առակայի ամփոփագրի ձևաթերթ

Դասահաճախում	Ընթացիկ ստուգում	Ամփոփիչ ստուգում	Գնահատական
Ստ	Ստ	-	Ստուգված
Ստ	Չստ	Ստ	Ստուգված
Ստ	Չստ	Չստ (ՉԼ)	Չստուգված
Չստ	Ստ	Ստ	Ստուգված
Չստ	Ստ	Չստ (ՉԼ)	Չստուգված
Չստ	Չստ	Ստ	Ստուգված
Չստ	Չստ	Չստ (ՉԼ)	Չստուգված

Ստուգարքային առարկայի ընթացիկ ստուգման չափորոշիչ պայմանները որոշում է տվյալ առարկան վարող ամբիոնը՝ ՈԻՄՎ-ի (մասնաճյուղերում՝ համապատասխան բաժնի) հետ համաձայնեցված: Կիսամյակի վերջում չափորոշիչ պայմանների բավարարման դեպքում ընթացիկ ստուգման վանդակում կատարվում է <<Ստ>>, հակառակ դեպքում՝ <<Չստ>> նշումը: Առարկան համարվում է <<Ստուգված>> (ուսանողը չի մասնակցում ամփոփիչ ստուգմանը), եթե ուսանողն ուսումնական առարկայից նախատեսված բոլոր պարապմունքների մասնակցել է դրանց հատկացված ժամաքանակի 50%-ից ոչ պակաս և բավարարել է ընթացիկ ստուգման պահանջները: Ուսումնական պարապմունքների հատկացված ժամաքանակի 50%-ից պակաս մասնակցելու դեպքում և/կամ ընթացիկ ստուգման չափորոշիչ պայմանների չբավարարման դեպքում ուսանողը մասնակցում է ամփոփիչ ստուգմանը:

**5. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ
ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՐԱՐ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

- 5.1. Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում ընթացիկ (կիսամյակային) ատեստավորման և արդյունաբար գնահատման ընթացակարգը տարածվում է ուսուցման բոլոր ձևերով բարձրագույն կրթություն ստացող ուսանողների վրա:
- 5.2. Կիսամյակային քննաշրջանի կազմակերպման նպատակն է պարզել ուսանողների և հետազոտողների գիտելիքների համապատասխանությունը ՀՀ կրթության Որակավորումների ազգային շրջանակի և դրանց ընդհանրական բնութագրերի պահանջներին՝ բացահայտելու ուսանողի տեսական և գործնական պատրաստականությունը տվյալ դասընթացի՝ պետական կրթական չափորոշիչներով սահմանված խնդիրների լուծման բնագավառում:
- 5.3. Ուսանողների գիտելիքների ընթացիկ ատեստավորումը՝ միջանկյալ (առկա ուսուցման քննական առարկաներ) կամ ընթացիկ (առկա ուսուցման ստուգարքային առարկաներ ու հեռակա ուսուցման բոլոր առարկաներ) ստուգումների տեսքով, իրականացվում է համապատասխանաբար կիսամյակի ընթացքում և վերջում, իսկ վերջնական գնահատումը՝ կիսամյակի վերջում ստուգարքների և քննությունների հանձնման համար սահմանված ժամկետներում:
- 5.4. Ստուգարքների և քննությունների, այդ թվում՝ նաև միջանկյալ/ընթացիկ ստուգումների գնահատումը կատարվում է դեկանատի կողմից տվյալ դասընթացի համար նախօրոք

պատրաստված ամփոփագրերում: Դրանք պատրաստվում են յուրաքանչյուր դասընթացի համար երկու օրինակից և ստորագրվում դեկանի կողմից: Ստուգումն ավարտելուց հետո դասախոսը լրացնում է ամփոփագրի համապատասխան սյունակը և նույն օրը մեկ օրինակը վերադարձնում է դեկանատ, իսկ մյուսը՝ ամբիոնի վարիչին:

- 5.5. Միջանկյալ (առկա ուսուցման քննական առարկաներ) ստուգումներն իրականացվում են յուրաքանչյուր կիսամյակի (բացառությամբ 5.6 կետում նշվածի) 8, 9 և 15, 16 շաբաթներում, առանց ուսումնական պարապմունքների ընդհատման: Դրանց իրականացման ժամկետներն առարկան վարող ամբիոնի առաջարկությամբ հաստատվում է ՈՒՄՎ-ի (մասնաճյուղերում՝ համապատասխան բաժնի) կողմից:
- 5.6. Բակլավրական և մագիստրոսական կրթական ծրագրերի առկա ուսուցման համապատասխանաբար 8-րդ և 4-րդ կիսամյակներում, ինչպես նաև հեռակա ուսուցման համակարգում միջանկյալ ստուգումներ չեն իրականացվում: Ամփոփագրերի համապատասխան սյունակներում կիսամյակի վերջում դասախոսի կողմից գրանցվում են տվյալ դասընթացի ընթացիկ ստուգումներից (լաբորատոր, գործնական, ստուգողական և հաշվեգրաֆիկական աշխատանքների, արտալսարանային առաջադրանքների, ռեֆերատների, սեմինարների, մոդուլների կատարման և յուրացման բաղադրիչներից), ինչպես նաև դասահաճախումից (առկա ուսուցում) ուսանողի հավաքած ռեյթինգային միավորները:
- 5.7. Քննական առարկաներից միջանկյալ (առկա ուսուցում) ստուգումներն անցկացվում են դասընթացի դասաժամերին, որպես կանոն, գրավոր տարբերակով, որի համար

ամբիոնի կողմից նախօրոք պատրաստվում են հարցատուներ (կամ թեստեր), որոնցում ընդգրկվում են հարցեր դասընթացի լաբորատոր, գործնական, ստուգողական և հաշվեգրաֆիկական աշխատանքների, արտալսարանային առաջադրանքների, ռեֆերատների, սեմինարների, մոդուլների կատարման և յուրացման բաղադրիչներից, որոնք, սակայն, չպետք է կրկնվեն տվյալ առարկայի ամփոփիչ քննության համար նախատեսված հարցատուներում:

- 5.8. Քննաշրջանին նախորդող ուսումնական շաբաթում ավարտվում է ստուգարքային առարկաներից ուսանողների գիտելիքների ստուգման գործընթացը, որի իրականացման համար ստուգարքի օրը դասախոսը դեկանատից ստանում է տվյալ դասընթացի ամփոփագրերը, լրացնում է դասահաճախման սյունակը (առկա ուսուցում), դեկանի հետ ճշտում ստուգարքին չթույլատրված ուսանողների ցանկը, այնուհետև դեկանն ամփոփագրի համապատասխան սյունակում կատարում է <<**Չթույլատրել**>> գրառումը և ստորագրում, որից հետո դասախոսը համապատասխան լսարանում իրականացնում է ստուգարքի ընդունումը: Ստուգարքի ընդունումն ավարտելուց հետո՝ մինչև ստուգարքային շաբաթվա ավարտը, դասախոսի կողմից լրացված և ստորագրված ամփոփագրի մեկ օրինակը վերադարձվում է դեկանատ, իսկ մյուսը՝ ամբիոն:

Ստուգարքներից պարտք ունեցող ուսանողին, անկախ պարտքերի թվից, թույլատրվում է մասնակցելու քննություններին: Ստուգարքների վերահանձնումը՝ որպես ակադեմիական պարտք, իրականացվում է քննաշրջանում և պարտքերի մարման շրջանում:

- 5.9. Եթե ուսանողը տվյալ առարկայի դասահաճախումից և միջանկյալ/ընթացիկ ստուգումներից ստացել է գրոյական

միավորներ, ապա քննական առարկայի դեպքում նա զրկվում է քննաշրջանում ամփոփիչ քննությանը մասնակցելու իրավունքից և գնահատվում է <<Անբավարար>>: Իսկ ստուգարքային առարկայի դեպքում, եթե ուսանողը չի կատարել լաբորատոր, գործնական, ստուգողական և հաշվեգրաֆիակական աշխատանքները, չի հանձնել արտալսարանային առաջադրանքները, ռեֆերատները, մոդուլները և չի մասնակցել սեմինարներին, ապա կարող է դրանք լրացնել ստուգարքային շաբաթում, որից հետո, նոր մասնակցել ամփոփիչ ստուգմանը:

5.10. Հարգելի պատճառով՝ համապատասխան փաստաթղթերով հիմնավորված և ռեկտորի (պրոռեկտորի, մասնաճյուղում՝ տնօրենի) կողմից թույլատրված, միջանկյալ/ընթացիկ ստուգմանը, կուրսային կամ հետագոտական աշխատանքի, կուրսային նախագծի պաշտպանությանը, պրակտիկայի հաշվետվության հանձնմանը, ինչպես նաև ամփոփիչ ստուգմանը կամ քննությանը չմասնակցած ուսանողը սահմանված կարգով ռեկտորի (պրոռեկտորի, մասնաճյուղում՝ տնօրենի) հրամանով կարող է այն իրականացնել անհատական ժամանակացույցով:

5.11. Միջանկյալ ստուգումների, ամփոփիչ ստուգարքների և քննությունների իրականացման ձևը (որպես կանոն՝ գրավոր) և բովանդակությունը որոշում է առարկան դասավանդող ամբիոնը: Առարկայի ստուգողական բաղադրիչների կառուցվածքը, բովանդակությունը՝ համապատասխան ռեյթինգային միավորներով, և իրականացման ձևն ու ժամանակացույցը կիսամյակի սկզբում պարտադիր տրամադրվում են ուսանողներին: Ամփոփիչ ստուգման և քննության համար ամբիոնի կողմից նախօրոք պատրաստվում են հարցատոմսեր կամ թեստեր (յուրա-

քանչյուրում ոչ պակաս երեք հարց, այդ թվում՝ խնդիր), որոնցում ընդգրկվում են դասընթացից տեսական հարցեր և խնդիրներ: Հարցատոմսերը նախօրոք քննարկվում են ամբիոնի նիստում և հաստատվում ամբիոնի վարիչի կողմից:

- 5.12. Առանց ամփոփիչ քննությանը մասնակցելու դրական (<<Բավարար>>) է գնահատվում այն ուսանողը, ով դասահաճախումից, միջանկյալ/ընթացիկ ստուգումներից հավաքել է գումարային առնվազն 40 միավոր, կատարել է ծրագրով նախատեսված բոլոր լաբորատոր աշխատանքները, ինչպես նաև հանձնել է այդ առարկայից նախատեսված կուրսային նախագիծը կամ կուրսային աշխատանքը:
- 5.13. Առարկայի ամփոփիչ քննությանը թույլատրվում է մասնակցելու այն ուսանողին, ով դասահաճախումից, միջանկյալ/ընթացիկ ստուգումների արդյունքում հավաքել է 0-ից բարձր գումարային միավոր, կատարել է ծրագրով նախատեսված բոլոր լաբորատոր աշխատանքները, ինչպես նաև հանձնել է այդ առարկայից նախատեսված կուրսային նախագիծը կամ աշխատանքը:
- 5.14. Դասահաճախման, միջանկյալ/ընթացիկ ստուգումների արդյունքով դրական գնահատված ուսանողն իրավունք ունի բարձրացնելու իր կիսամյակային առարկայական ռեյթինգը՝ մասնակցելով ամփոփիչ քննությանը:
- 5.15. Քննաշրջանի ժամանակացույցը ներկայացվում է ֆակուլտետների ղեկանների և ՈԻՄՎ-ի (մասնաճյուղերում՝ համապատասխան բաժնի) կողմից, հրամանագրվում է ռեկտորի (պրոռեկտորի, իսկ մասնաճյուղերում՝ տնօրենների) կողմից և տրվում բոլոր ստորաբաժանումներին:

- 5.16. Քննությունները իրականացվում են ՈԻՄՎ-ի (մասնաճյուղերում՝ համապատասխան բաժնի) կողմից նախօրոք հատկացված լսարանում՝ համաձայն հաստատված ժամանակացույցի: Քննությունից մեկ օր առաջ դասախոսը դեկանին է ներկայացնում լաբորատոր աշխատանքներից պարտք ունեցող ուսանողների վերաբերյալ ծառայողական գրությունը: Քննության օրը դասախոսը դեկանատից ստանում է տվյալ դասընթացի 2 օրինակից ամփոփագրերը, լրացնում դասահաճախման սյունակը (առկա ուսուցում), դեկանի հետ ճշտում քննության չթույլատրված ուսանողների ցանկը, այնուհետև դեկանն ամփոփագրի համապատասխան սյունակում կատարում է <<**Չթույլատրել**>> գրառումը և ստորագրում, որից հետո դասախոսը համապատասխան լսարանում իրականացնում է քննության ընդունումը:
- 5.17. Առանց ստուգման գրքույկի ներկայացման՝ արգելվում է ուսանողից ստուգարքի կամ քննության ընդունումը դասախոսի (հանձնաժողովի) կողմից:
- 5.18. Քննության ավարտից հետո ամփոփագրերը, լրացված և ստորագրված դասախոսի կողմից, իսկ հանձնաժողովային քննության դեպքում՝ նաև հանձնաժողովի նախագահի կողմից, նույն օրը վերադարձվում են դեկանատ և ամբիոն:
- 5.19. Ստուգարքի և քննության ավարտից հետո դասախոսը պարտավոր է ուսանողներին հայտարարել արդյունքները, լրացնել ստուգման գրքույկները և հանձնել ուսանողներին:
- 5.20. Ուսանողների կողմից միջանկյալ/ընթացիկ ստուգումների, կուրսային և հետազոտական աշխատանքների, կուրսային նախագծերի, պրակտիկաների, ստուգարքների և ամփոփիչ քննությունների հանձման արդյունքների բողո-

քարկումն իրականացվում է համաձայն <<Ուսանողների գի-տելիքների գնահատման բողոքարկման ընթացակարգ>>-ի:

- 5.21. Քննական առարկայի կիսամյակային առարկայական ռեյթինգը՝ բոլոր ստուգողական բաղադրիչներից ուսանողի կողմից ստացած միավորների գումարն է:
- 5.22. Քննական առարկան գնահատվում է դրական, եթե կիսամյակային առարկայական ռեյթինգը մեծ կամ հավասար է 40-ի:
- 5.23. Ուսանողին հնարավորություն է տրվում յուրաքանչյուր առարկան, ներառյալ պարտքերի մարման շրջանը, հանձնել ոչ ավելի, քան երեք անգամ: Պարտքերի մարման շրջանի համար վերջնաժամկետ է սահմանվում համապատասխան ուսուցման ձևի ընթացիկ կիսամյակի 3-րդ շաբաթվա վերջը:
- 5.24. Տվյալ քննաշրջանի պարտքերի մարման համար սահմանված ժամանակաշրջանից հետո ստուգաքային կամ քննական որևէ առարկայից (բացառությամբ ֆիզիկական կուլտուրայի) դրական չգնահատված ուսանողը հեռացվում է համալսարանից՝ կիսամյակում ցուցաբերած անբավարար ակադեմիական առաջադիմության համար: Բացառություն են կազմում ոչ ավարտական կուրսի առավելագույնը 12 կրեդիտ ակադեմիական պարտքեր ունեցող պարտադիր զինվորական ծառայությունից առանց տարկետման իրավունքի սովորող ուսանողները, որոնց իրավունք է վերապահվում մինչև ավարտական կուրսի ուսումնական տարվա սկիզբը լրացնելու առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերը, վճարովի հիմունքներով վերահանձնելով առարկաները ևս 2 անգամ կամ կրկնելով դրանք:

- 5.25. Պարտքերի մարման շրջանից հետո ֆիզիկական կուրսուրայից ստուգարքը չհանձնած ուսանողը պարտավոր է այն հանձնել մինչև հաջորդ կիսամյակի քննաշրջանի սկիզբը, որից հետո միայն նրան թույլատրվում է մասնակցելու տվյալ կիսամյակի քննաշրջանին, հակառակ դեպքում հեռացվում է համալսարանից:
- 5.26. Կիսամյակի արդյունքում գերազանցիկ է համարվում այն ուսանողը, ով բոլոր քննական առարկաներից, կուրսային նախագծերից, կուրսային ու հետազոտական աշխատանքներից և պրակտիկաներից առանց վերահանձնման հավաքել է <<**Գերազանց**>> գնահատականին համապատասխանող ռեյթինգային միավորներ:
- 5.27. Շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումը (դիպլոմային աշխատանքի/մագիստրոսական թեզի պաշտպանությունը) իրականացվում է՝ համաձայն ՀՀ Կրթության և գիտության նախարարի 2011թ. հոկտեմբերի 31-ի թիվ 1197-Ն հրամանով հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգ»-ի:
- 5.28. Ուսանողների գիտելիքների գնահատման ռեյթինգային համակարգի արդյունքների գրանցման համար անհրաժեշտ ձևաթերթերը մշակում և ամբիոններին տրամադրում է ՈՒՄՎ-ն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1. Ուսանողն իրավունք ունի բողոքարկելու՝ գիտելիքների ստուգման ցանկացած բաղադրիչից և ձևից (միջանկյալ/ընթացիկ ստուգում, կուրսային և հետազոտական աշխատանք, կուրսային նախագիծ, պրակտիկա, ամփոփիչ ստուգարք, ամփոփիչ քննություն, ամփոփիչ ատեստավորում) ստացած գնահատականին համաձայն չլինելու դեպքում:
2. Եթե գիտելիքների ստուգման և գնահատման գործընթացն իրականացվել է **գրավոր** ձևից (միջանկյալ/ընթացիկ ստուգում, կուրսային և հետազոտական աշխատանք, կուրսային նախագիծ, պրակտիկա, ամփոփիչ ստուգարք, ամփոփիչ քննություն), ապա ուսանողը բողոքարկման դիմումն անձամբ ներկայացնում է տվյալ ամբիոնի վարիչի անունով՝ արդյունքները հրապարակելուց հետո մեկ ժամվա ընթացքում:
 - 2.1. Բողոք-դիմումն ընդունելուց և համապատասխան ձևով գրանցելուց հետո ամբիոնի վարիչն իր նախագահությամբ կամ իր երաշխավորությամբ ձևավորում է բողոքարկման հանձնաժողով, որում պարտադիր ընդգրկվում են ֆակուլտետի դեկանը (տեղակալը), առարկան դասավանդող դասախոսը, ամբիոնի մեկ այլ դասախոս, տվյալ ֆակուլտետի ուսանողական խորհրդի ներկայացուցիչը, և նույն օրը ուսանողի ներկայությամբ կազմակերպում գրավոր աշխատանքի քննարկումը:
 - 2.2. Բողոքարկման հանձնաժողովը ստուգում է ուսանողի գրավոր աշխատանքի գնահատման համապատասխանությունը հարցատոմսի հարցերի պատասխաններին և բաց քվեարկությամբ, հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ կայացնում է որոշում՝

ա) գնահատականը (ստուգարքի արդյունքը) մնում է անփոփոխ,

բ) գնահատականը (ստուգարքի արդյունքը) փոփոխվում է (բարձրացվում է կամ իջեցվում):

- 2.3. Որոշումը ձևակերպվում է համապատասխան արձանագրությամբ, որը ստորագրվում է հանձնաժողովի նախագահի, անդամների և բողոքարկող ուսանողի կողմից: Կայացված որոշմանն անհամաձայնություն հայտնելու դեպքում ուսանողի կողմից գրավոր ներկայացվում է հատուկ կարծիք, որը կցվում է արձանագրությանը:
- 2.4. Գնահատականի փոփոխման դեպքում քննական/ստուգարքային ուղեգրում կատարվում է համապատասխան գրառում և այն կցվում է խմբային ամփոփագրին: Համապատասխան գրառում է կատարվում նաև ուսանողի ստուգարքային գրքույկում:
3. Եթե գիտելիքների ստուգման և գնահատման գործընթացն իրականացվել է **բանավոր**, ապա ուսանողը, առանց քննասենյակից դուրս գալու, քննություն անցկացնող դասախոսին խնդրում է հրավիրել տվյալ ամբիոնի վարիչին և անձամբ բողոքարկման դիմում է ներկայացնում նրա անունով:
 - 3.1. Ամբիոնի վարիչը սույն ընթացակարգի թիվ 2.1 կետում նշված կարգով ձևավորում է բողոքարկման հանձնաժողով և տեղում կազմակերպում ուսանողի գիտելիքների ստուգումը տվյալ քննական տոմսի հարցերի շրջանակներում:
 - 3.2. Բողոքարկման հանձնաժողովը բաց քվեարկությամբ, հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ կայացնում է որոշում սույն ընթացակարգի

թիվ 2.2 կետում սահմանված կարգով: Որոշումը ձևակերպվում է համապատասխան արձանագրությամբ՝ համաձայն սույն ընթացակարգի թիվ 2.3 և 2.4 կետերի:

4. **Ամփոփիչ ատեստավորումից (դիպլոմային աշխատանքի/մագիստրոսական թեզի պաշտպանությունից)** ստացած գնահատականի բողոքարկումն իրականացվում է ՀՀ Կրթության և գիտության նախարարի 2011թ. հոկտեմբերի 31-ի թիվ 1197-Ն հրամանով հաստատված <<ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգ>>-ի 33-րդ կետին համապատասխան: Գրավոր բողոքը, արդյունքները հրապարակելուց հետո մեկ ժամվա ընթացքում, ներկայացվում է հանձնաժողովի նախագահին, ով բողոքի քննարկումը կազմակերպում է նույն օրը:
- 4.1. Գրավոր բողոքի քննարկմանը մասնակցում են համալսարանի վարչակազմի՝ տվյալ հանձնաժողովի անդամ չհանդիսացող աշխատակիցը և ուսանողական խորհրդի ներկայացուցիչը, որոնց թեկնածությունները նախապես հաստատվում են համալսարանի ռեկտորի (պրոռեկտորի, մասնաճյուղում՝ տնօրենի) կողմից:
- 4.2. Շրջանավարտի ներկայությամբ լսվում է պատասխանի ձայնագրությունը: Բողոքարկման արդյունքում բաց քվեարկությամբ, հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, կայացվում է որոշում՝
 - ա) գնահատականը թողնել անփոփոխ,
 - բ) գնահատականը բարձրացնել:
- 4.3. Որոշումը ձևակերպվում է արձանագրությամբ, որը պարտադիր ստորագրվում է հանձնաժողովի բոլոր

անդամների և շրջանավարտի կողմից: Կայացված որոշմանն անհամաձայնություն հայտնելու դեպքում շրջանավարտի կողմից գրավոր ներկայացվում է հատուկ կարծիք, որը կցվում է արձանագրությանը: Հանձնաժողովի որոշումը վերջնական է և փոփոխման ենթակա չէ:

- 4.4. Գնահատականի փոփոխման դեպքում արձանագրությունների հատուկ մատյանում կատարվում է համապատասխան գրառում:
5. Առանց քննարկման բողոքարկումը մերժվում է, եթե՝
 - այն վերաբերում է <<Ուսանողների գիտելիքների հսկման և գնահատման ռեթինգային համակարգի կանոնակարգ-ընթացակարգ>>-ով սահմանված գիտելիքների ստուգման և գնահատման ընթացակարգային պահանջներին,
 - ուսանողի կողմից ներկայացվում է չհիմնավորված պատճառաբանություն իր առողջական վիճակի վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ
ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ

Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման ընթացակարգը տարածվում է ուսուցման բոլոր ձևերով բարձրագույն կրթություն ստացող շրջանավարտների վրա:
2. Ամփոփիչ ատեստավորման նպատակն է՝
 - պարզել շրջանավարտի գիտելիքների համապատասխանությունը ՀՀ կրթության Որակավորումների ազգային շրջանակի և դրանց ընդհանրական բնութագրերի պահանջներին,
 - բացահայտել շրջանավարտի տեսական և գործնական պատրաստականությունը պետական կրթական չափորոշիչներով սահմանված մասնագիտական խնդիրների լուծման բնագավառում:

2. ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄԸ

3. Ճարտարագիտության բակալավրի դիպլոմային աշխատանքն ավարտուն տեխնիկական, տեխնոլոգիական կամ տնտեսագիտական նախագիծ է կամ մշակում, որը կատարվում է մասնագիտության կրթական ծրագրին համապատասխան և նպատակ ունի նպաստելու վերջինիս վերջնարդյունքների ձեռքբերմանը:

Դիպլոմային աշխատանքների թեմաների ընտրությունն ու բաշխումն իրականացնում է մասնագիտական ամբիոնը, առկա ուսուցման ավարտական կուրսի համար՝

մինչև տվյալ ուսումնական տարվա սեպտեմբերի 15-ը, իսկ հեռակա ուսուցման ավարտական կուրսի համար՝ մինչև հոկտեմբերի 10-ը: Թեմաները հաստատվում են պրոռեկտորի հրամանով: Թեմաներում պարտադիր կարգով պետք է ներառվեն տվյալ մասնագիտական ոլորտին առնչվող հիմնահարցերը՝ հաշվի առնելով մասնագիտացումները և ընտրովի դասընթացների բովանդակությունն ըստ կրթաբլոկների: Դիպլոմային աշխատանքը պետք է ներառի նաև տնտեսագիտության, բնապահպանության և կենսագործունեության անվտանգության բաժիններ, իսկ տնտեսագիտական մասնագիտությունների դեպքում՝ տեխնոլոգիական բաժին՝ առաջինի փոխարեն: Բնապահպանական բնույթի մասնագիտությունների համար բնապահպանության բաժին չի պահանջվում:

4. Դիպլոմային աշխատանքի/մագիստրոսական թեզի կատարման համար հրամանով նշանակվում են ղեկավար և խորհրդատուներ՝ համալսարանի կողմից վերոնշյալ անձանց ներկայացվող պահանջների պարտադիր պահպանմամբ:
5. Ճարտարագիտության մագիստրոսի որակավորման ամփոփիչ ատեստավորումը ներառում է մագիստրոսական թեզի պաշտպանությունը, որով բացահայտվում է ապագա մագիստրոսի տեսական և գործնական պատրաստականությունը՝ կրթական վերջնարդյունքների ձեռքբերման աստիճանը:
6. Մագիստրոսական թեզն ավարտուն տեխնիկական, տեխնոլոգիական կամ տնտեսագիտական նախագիծ կամ մշակում է՝ նվիրված գիտության և տեխնիկայի տվյալ մասնագիտական ոլորտին առնչվող արդիական հիմնա-

խնդիրների լուծմանը, ինչը բխում է ուսումնառության ընթացքում ուսանողի ձեռք բերած գիտելիքների, հմտությունների և կարողությունների պահանջներից:

7. Մագիստրոսական թեզի թեմաների և դեկավարների ընտրությունն ու բաշխումն իրականացնում է մասնագիտական ամբիոնը, առկա ուսուցման առաջին կուրսի համար՝ մինչև տվյալ ուսումնական տարվա սեպտեմբերի 15-ը, իսկ հեռակա ուսուցման առաջին կուրսի համար՝ մինչև տվյալ ուսումնական տարվա նոյեմբերի 30-ը: Թեմաները հաստատվում են պրոռեկտորի հրամանով: Մագիստրոսական թեզի դեկավարի գիտական աստիճանի առկայությունը, որպես կանոն, պարտադիր է:
8. Համաձայն տվյալ տարվա ուսումնական գործընթացի ժամանակացույցի՝ դիպլոմային աշխատանքի/մագիստրոսական թեզի կատարման ընթացքում մասնագիտական ամբիոնի կողմից ներկայացված և սահմանված կարգով հրամանագրված հանձնաժողովը, շրջանավարտի և դեկավարի մասնակցությամբ կամ դեկավարի գրավոր եզրակացությամբ, ուսումնառության վերջին երկու կիսամյակներում երեք անգամ իրականացնում է կատարողականի ստուգում, որոնց ամփոփման արդյունքում, համաձայն <<Ուսանողների գիտելիքների հսկման և գնահատման ռեյթինգային համակարգի կանոնակարգ-ընթացակարգ>>-ի, ձևավորվում է դիպլոմային աշխատանքի և մագիստրոսական թեզի կատարման համաչափության բաղադրիչի ռեյթինգային միավորը:
9. Դիպլոմային աշխատանքը՝ դեկավարի կից գրավոր կարծիքով, ֆակուլտետի դեկանի կողմից հղվում է գրախոսման՝ ամբիոնի կողմից ստեղծված հանձնաժողովին, իսկ

մագիստրոսական թեզը՝ դարձյալ ղեկավարի գրավոր կարծիքի առկայությամբ, հղվում է արտաքին գրախոսման տվյալ ոլորտի փորձառու մասնագետներին, որոնց կազմն ամբիոնի վարիչի ներկայացմամբ նախապես հաստատվում է ամբիոնի նիստում: Մագիստրոսական թեզի գրախոսման դեպքում գրախոսի գիտական աստիճանի առկայությունը, որպես կանոն, պարտադիր է:

3. ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

10. Դիպլոմային աշխատանքը և մագիստրոսական թեզը, որոնք բաղկացած են հաշվեբացատրագրից և հաշվեգրաֆիկական մասից, ըստ կրթական ծրագրերի և մասնագիտությունների, պետք է բավարարեն հետևյալ պահանջները.

10.1. Բակալավրի կրթական ծրագրի դեպքում.

- հաշվեբացատրագրի ծավալը պետք է լինի ոչ պակաս 55-65 համակարգչային տպագիր էջ, որից տնտեսագիտության բաժինը՝ 8-9 էջ, բնապահպանության և կենսագործունեության անվտանգության բաժինները՝ յուրաքանչյուրը 4-5 էջ,

- տնտեսագիտական մասնագիտությունների համար տեխնոլոգիական բաժինը պետք է լինի խիստ փոխկապակցված տնտեսագիտություն բաժնի հետ, իսկ ծավալը՝ 14-15 էջ:

10.1.1. Հաշվեբացատրագիրը պետք է ներառի.

- ներածություն, որտեղ պետք է հիմնավորվի թեմայի արդիականությունը և ձևակերպվի հիմնախնդիրը,

- առաջադրված խնդրի լուծման համար տեխնիկական, տեխնոլոգիական, տնտեսագիտական գործընթացի կամ ծրագրի ընտրումը և տեսական հիմնավորումը,

- նյութերի, հիմնական ու օժանդակ սարքավորումների ընտրման հիմնավորումը,

- տեխնոլոգիական ռեժիմների, գործընթացների կամ ծրագրերի հաշվարկը և հիմնավորումը,

- ընտրված տեխնոլոգիաների կամ ծրագրերի տեխնիկատնտեսական հիմնավորումը,

- բնապահպանության և կենսագործունեության անվտանգության պահանջների ապահովման հիմնավորումը,
- ընդհանուր եզրակացություններ ու առաջարկություններ,
- օգտագործված գրականության ցանկ՝ տեքստում դրանց արված համապատասխան հղումներով:

10.1.2. Հաշվեգրաֆիկական մասը մեքենաշինական, տրանսպորտային, մեխանիկա-մեքենագիտական, ընդերքաբանության, մետալուրգիական, նյութագիտության, քիմիական, շինարարական, էներգետիկական և էլեկտրատեխնիկական մասնագիտությունների համար պետք է լինի Ա1 ձևաչափի 6 թերթից ոչ պակաս, իսկ մնացած մասնագիտությունների համար, այդ թվում՝ նաև տնտեսագիտական և բնապահպանական՝ Ա1 ձևաչափի 5 թերթից ոչ պակաս, որոնք կարող են ներկայացվել ինչպես պլակատների, այնպես էլ լուսապատկերների (սլայդների) տեսքով: Լուսապատկերներով ներկայացման դեպքում էլեկտրոնային կրիչի առկայությունը պարտադիր է, իսկ լուսապատկերները՝ ձևակերպված պլակատներին ներկայացվող պահանջներով, Ա4 ձևաչափով կցվում են դիպլոմային աշխատանքի հաշվեբացատագրին որպես հավելված:

10.2. Մագիստրոսական կրթական ծրագրի դեպքում.

- մագիստրոսական թեզի ծավալը պետք է լինի ոչ պակաս 60-70 համակարգչային տպագիր էջ: Թեզը պաշտպանության ժամանակ կարող է ներկայացվել ինչպես պլակատների, այնպես էլ լուսապատկերների տեսքով: Լուսապատկերներով ներկայացման դեպքում էլեկտրոնային կրիչի առկայությունը պարտադիր է, իսկ լուսապատկերները՝ ձևակերպված պլակատներին ներկայացվող պահանջներով, Ա4 ձևաչափով կցվում են մագիստրոսական թեզի հաշվե-

բացատագրին որպես հավելված: Պլակատների կամ լուսապատկերների թիվը չի սահմանափակվում և պայմանավորված է աշխատանքի առանձնահատկություններով:

10.2.1. Մագիստրոսական թեզը պետք է ներառի.

- ներածություն, որտեղ պետք է հիմնավորվեն թեմայի արդիականությունը և հետազոտվող խնդիրների կարևորությունը, հստակ ձևակերպվեն աշխատանքի նպատակը և պաշտպանության ներկայացվող դրույթները
- ոլորտին առնչվող գրականության վերլուծություն, որի հիման վրա պետք է ձևակերպվեն թեզում հետազոտման ենթակա խնդիրները և դրանց առանձնահատկությունները,
- հետազոտման մեթոդի ընտրումը (մշակումը) և հիմնավորումը,
- հաշվարկային ծրագրերը և դրանց հիման վրա ստացված արդյունքները՝ համապատասխան վերլուծություններով,
- փորձագիտական կամ հետազոտական մասը,
- ընդհանուր եզրակացություններ ու առաջարկություններ,
- օգտագործված գրականության ցանկ՝ տեքստում դրանց արված համապատասխան հղումներով:

10.3. Դիպլոմային աշխատանքի և մագիստրոսական թեզի ձևակերպման ընդհանուր պահանջները

Տեքստը հավաքվում է Sylfaen կամ GHEA Grapalat տառատեսակով, Ա4 ձևաչափի սպիտակ թղթի մեկ կողմում՝ 12 տառաչափով, յուրաքանչյուր էջում 28-30 տող (1,8 քայլքով): Էջերը պետք է ունենան լուսանցքներ՝ ձախից՝ 30 մմ, վերևից՝ 20 մմ, աջից՝ 10 մմ, ներքևից՝ 25 մմ: Դիպլոմային աշխատանքի/մագիստրոսական թեզի բաժինների անվանումները պետք է գրվեն մեծատառերով և սկսվեն նոր էջից: Դիպլոմային աշխատանքի/մագիստրոսական

թեզի բոլոր էջերը, ներառյալ նկարները, աղյուսակները, հավելվածը և այլն, համարակալվում են: Տիտղոսաթերթը համարվում է առաջին էջ և չի համարակալվում:

Նկարների, գծապատկերների, գծագրերի անվանումները, նշանակումների բացատրությունները տրվում են անմիջականորեն այդ նյութերի ներքևում: Լուսանկարները կարելի է սուսնձել թղթի վրա: Աղյուսակները կարելի է տեղադրել ուղղաձիգ կամ հորիզոնական դիրքով: Յուրաքանչյուր աղյուսակ պետք է համարակալել վերևի աջ անկյունում արաբական թվերով, որի տակ գրվում է աղյուսակի անվանումը: Եթե մեկ թերթի վրա աղյուսակը չի տեղավորվում, ապա պետք է այն շարունակել մյուս թերթի վրա՝ նշելով, որ շարունակություն է: Աղյուսակի սյունակներում ազատ տեղեր չպետք է մնան, պետք է դնել գծիկ:

Գրականության ցանկը կարելի է ներկայացնել կամ այբբենական կարգով՝ նշելով հղումների համարները տեքստում, կամ համարակալված ըստ դիպլոմային աշխատանքի/մագիստրոսական թեզի բաժիններում արված հղումների: Ցանկում աղբյուրները պետք է ընդգրկեն՝ հեղինակների ազգանունը և անվան-հայրանվան սկզբնատառերը, աղբյուրի լրիվ անվանումը, հրատարակության տվյալները (տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջերը): Տեղեկատվական պաշտոնական, այդ թվում՝ էլեկտրոնային աղբյուրների, համակարգչային ծրագրերի, հաշվետվությունների, հրահանգների, հեղինակային իրավունքի արտոնագրերի, պատենտների դեպքում ներկայացվում են լրիվ տվյալները:

Աղբյուրները բերվում են բնօրինակի լեզվով:

Մեծ ծավալով հավելվածը կարող է էջադրվել առանձին:

**4. ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ
ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

11. Դիպլոմային աշխատանքի և մագիստրոսական թեզի պաշտպանության հանձնաժողովները կազմվում են 8-ից ոչ պակաս անդամներից, որոնց առնվազն 50 %-ը, այդ թվում՝ նախագահը և տեղակալը, պետք է լինեն դրսից հրավիրված տվյալ կամ հարակից բնագավառի առաջատար մասնագետներ, ընդ որում, համաձայն գործող կարգի, նախագահին համալսարանի ներկայացմամբ հաստատում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը: Հույժ անհրաժեշտության դեպքում, դրսից հրավիրվածների կազմում (բացառությամբ նախագահի և տեղակալի) կարող են ընդգրկվել տվյալ ոլորտի ճանաչված մասնագետներ, ովքեր համատեղությամբ դասավանդում են համալսարանում:

Մագիստրոսական թեզի պաշտպանության հանձնաժողովի անդամները, որպես կանոն, պետք է ունենան գիտական աստիճան:

12. Մասնաճյուղերում դիպլոմային աշխատանքի/մագիստրոսական թեզի պաշտպանության հանձնաժողովների նախագահի տեղակալ է նշանակվում ՀԱՊՀ-ի (այդ թվում նաև Երևանյան կրթահամալիրի) ներկայացուցիչը:
13. Դիպլոմային աշխատանքի/մագիստրոսական թեզի պաշտպանության հանձնաժողովների կազմում ի պաշտոնե ընդգրկվում են ռեկտորը կամ համապատասխան համակարգող պրոռեկտորը, մասնաճյուղերում՝ մասնաճյուղի տնօրենը կամ տեղակալը, համապատասխան ֆակուլտե-

տի դեկանը կամ նրա տեղակալը, մասնագիտական ամբիոնի վարիչը:

14. Հանձնաժողովի մնացած կազմը համալրվում է տվյալ ոլորտի ՀԱՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի առաջատար ներկայացուցիչներով և ոլորտին առնչվող կազմակերպությունների, գիտական հիմնարկների, գերատեսչությունների և բուհերի մասնագետներով:
15. Դիպլոմային աշխատանքների/մագիստրոսական թեզերի պաշտպանության հանձնաժողովների նիստերն արձանագրվում են քարտուղարի կողմից, ով հանձնաժողովի անդամ չէ:
16. Հանձնաժողովների կազմերը, ներառյալ քարտուղարը, հրամանագրվում են ՀԱՊՀ ռեկտորի կողմից: Հանձնաժողովներն իրավասու են գործելու մինչև ռեկտորի հրամանով հաստատված ժամանակացույցով համապատասխան մասնագիտությամբ դիպլոմային աշխատանքների/մագիստրոսական թեզերի պաշտպանությունների համար նախատեսված ժամկետի ավարտը:

**5. ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ
ԹԵԶԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ
ԱՆՑԿԱՑՈՒՄԸ**

17. Ամփոփիչ ատեստավորման (դիպլոմային աշխատանքի/մագիստրոսական թեզի պաշտպանության) թույլատրվում են այն ուսանողները, ովքեր ավարտել են հիմնական մասնագիտական կրթական ծրագրով ուսուցման լրիվ դասընթացը և հաջողությամբ հանձնել կրթական ծրագրով (ուսումնական պլանով) նախատեսված բոլոր քննություններն ու ստուգարքները և կուտակել համապատասխան կրեդիտներ:
Ամփոփիչ ատեստավորման թույլատրված ուսանողների ցուցակը հաստատվում է ռեկտորի (պրոռեկտորի) հրամանով՝ ֆակուլտետի դեկանի ներկայացմամբ:
18. Դիպլոմային աշխատանքների/մագիստրոսական թեզերի պաշտպանությունների ժամանակացույցը ֆակուլտետի դեկանի ներկայացմամբ հաստատում է ռեկտորը (պրոռեկտորը) և հրապարակվում է դիպլոմային աշխատանքի/մագիստրոսական թեզի պաշտպանությունից առնվազն մեկ ամիս առաջ:
19. Դիպլոմային աշխատանքների/մագիստրոսական թեզերի պաշտպանություններն անցկացվում են հանձնաժողովների բաց նիստում՝ հանձնաժողովի կազմի երկու երրորդից ոչ պակաս անդամների ներկայության դեպքում: Դիպլոմային աշխատանքների/ մագիստրոսական թեզերի պաշտպանությունները կարող են տեղի ունենալ ինչպես

բուհում, այնպես էլ տվյալ մասնագիտական ոլորտին առնչվող հիմնարկներում և կազմակերպություններում:

20. Դիպլոմային աշխատանքի/մագիստրոսական թեզի բովանդակությունը ներկայացնելու համար յուրաքանչյուր ուսանողին տրվում է մինչև 20 րոպե ժամանակ: Հարց ու պատասխանի համար տրվում է մինչև 30 րոպե ժամանակ:

Հանձնաժողովի նիստի տևողությունը չպետք է գերազանցի աշխատանքային օրվա 8 ժամը:

Ամփոփիչ ատեստավորման ընթացքն արձանագրվում և ձայնագրվում է: Արդյունքները հրապարակելուց հետո ձայնագրությունը պահվում է 24 ժամ:

21. Դիպլոմային աշխատանքի/մագիստրոսական թեզի պաշտպանության արդյունքները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար», «Անբավարար» գնահատականներով՝ ՀԱՊՀ-ում ընդունված գնահատման սանդղակով, և հայտարարվում նույն օրը՝ հանձնաժողովի նիստի արձանագրությունը կազմելուց հետո մեկ ժամվա ընթացքում:

22. Դիպլոմային աշխատանքի/մագիստրոսական թեզի պաշտպանության դրական («բավարար», «լավ», «գերազանց») արդյունքների հիման վրա, որոնք ձևակերպված են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների արձանագրություններով, ընդունվում է որոշում՝ շրջանավարտին շնորհելու համապատասխան որակավորում և տալու Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ): Բացասական («անբավարար») արդյունքի դեպքում շրջանավարտին որակավորում չի շնորհ-

վում և բարձրագույն կրթությունը հավաստող դիպլոմ չի տրվում:

23. Գերազանցության դիպլոմ տրվում է բակալավրատում միջին որակական գնահատականի (ՄՈԳ-ի) առավելագույն արժեքի 90 տոկոսը ($ՄՈԳ \geq 3,6$), իսկ մագիստրատուրայում՝ 95 տոկոսն ($ՄՈԳ \geq 3,8$) ապահոված և համապատասխանաբար՝ բակալավրատում դիպլոմային աշխատանքը, իսկ մագիստրատուրայում մագիստրոսական թեզը <<գերազանց>> գնահատականով պաշտպանած շրջանավարտներին:
24. Դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության հանձնաժողովների որոշումներն ընդունվում են հանձնաժողովների փակ նիստերում: Շրջանավարտի գնահատականի մասին որոշումն ընդունվում է հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կողմից նշանակված գնահատականների միջին թվաբանականով, որն ամբողջացվում է սահմանված կարգով:
25. Նախագահի բացակայության դեպքում ռեկտորի ներկայացմամբ, ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով, նշանակվում է փոխարինող:
26. Դիպլոմային աշխատանքի և մագիստրոսական թեզի պաշտպանության հանձնաժողովների բոլոր որոշումները քարտուղարի կողմից արձանագրվում են արձանագրությունների հատուկ մատյանում՝ յուրաքանչյուր շրջանավարտի համար առանձին էջում: Արձանագրությունները պարտադիր ստորագրվում են հանձնաժողովի նախագահի և նիստին մասնակցած անդամների կողմից: Արձանագրությունները պահվում են համալսարանում: Արձանագրության մեջ նշվում են դիպլոմային աշխա-

տանքի/մագիստրոսական թեզի գնահատականը, ինչպես նաև տրված հարցերը, հատուկ կարծիքները և այլն: Արձանագրության մեջ նշվում են շնորհված որակավորումը, աստիճանը և հաստատությունն ավարտողի դիպլոմի տեսակը (սովորական կամ գերազանցությամբ):

27. Դիպլոմային աշխատանքի/մագիստրոսական թեզի պաշտպանությունից <<անբավարար>> գնահատական ստացած շրջանավարտի կողմից պաշտպանության արդյունքների բողոքարկման դեպքում այն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության Բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգի 33-րդ կետի (ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011թ. նոյեմբերի 31-ի N 1197-Ն հրաման):
28. Դիպլոմային աշխատանքի/մագիստրոսական թեզի պաշտպանությունից <<անբավարար>> գնահատական ստացած շրջանավարտին, իր ցանկությամբ, անվճար տրվում է սահմանված ձևի ակադեմիական տեղեկանք՝ դիմումը ներկայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:
29. Դիպլոմային աշխատանքը/մագիստրոսական թեզը չպաշտպանած կամ <<անբավարար>> գնահատական ստացած շրջանավարտին թույլատրվում է կրկնել դիպլոմային աշխատանքի/մագիստրոսական թեզի պաշտպանությունը հաջորդ ուսումնական տարվա ավարտին կամ հետագա տարիներին՝ այն կրթական ծրագրով, որը նախատեսված է եղել նրա ավարտելու տարում:

Վերոհիշյալ պարագայում շրջանավարտը՝ իր դիմումի համաձայն և համապատասխան վճարման դեպքում, ուսումնական տարվա սկզբին, առկա ուսուցման

դեպքում՝ մինչև տվյալ տարվա սեպտեմբերի 30-ը, իսկ հեռակա ուսուցման դեպքում՝ մինչև տվյալ տարվա հոկտեմբերի 31-ը, կցագրվում է համապատասխան մասնագիտական խմբին (համապատասխան մասնագիտությամբ ակադեմիական խմբի բացակայության դեպքում կցագրումը կատարվում է մասնագիտական ամբիոնին) և ստանում դիպլոմային աշխատանքի/մագիստրոսական թեզի նոր թեմա՝ սահմանված կարգով այն կատարելու և պաշտպանության ներկայացնելու նպատակով:

Հիմք՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգը (ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011թ. նոյեմբերի 31-ի N 1197-Ն հրամանը և 2014 թ. մայիսի 12-ի թիվ 01/06.2/4930-14 գրությունը):

Ստորագրված է տպագրության՝ 07.09.2015
Թուղթը՝ «օֆսեթ»: Տպագրությունը՝ ռիզո, Ֆորմատ՝ (60×84) 1/16:
Շարվածքը՝ համակարգչային:
Տառատեսակը՝ Sylfaen: 3 տպ. մամ.:
Պատվեր՝ 348: Տպաքանակ՝ 1000

*Հայաստանի Ազգային
Պոլիտեխնիկական
Համալսարանի տպարան*
Երևան, Տերյան 105 Հեռ.՝ 52-03-56

*Типография Национального
Политехнического Университета
Армении*
Ереван, ул. Теряна 105 Тел.: 52-03-56